

«ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերություն

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

*2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

«ՄոբիԴրամ» ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն	1
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	2
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն	4
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 1	5



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՄորփԴրամ» փակ բաժնետիրական ընկերության Բաժնետիրոջը և Խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, և կից ծանոթագրությունը, քաղված «ՄորփԴրամ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն»)՝ 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով, կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2017թ. հունիսի 9-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» (վերանայված) ստանդարտին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր
գործընկեր՝

Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Լ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի
հիման վրա)



9 հունիսի, 2017թ.

«ՄոբիԴրամ» ՓԲԸ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազ.դրամ	2016թ.	2015թ.
Կոմունալ վճարումներ	66,425	55,466
Արտաքին վճարումներ	7,242	8,412
Վարկի մարումներ	7,560	7,002
Միջազգային դրամական փոխանցումներ	1,625	1,750
Էլեկտրոնային փողեր	6,274	1,823
Այլ	2,317	1,090
Ընդամենը հասույթ	91,443	75,543
Աշխատավարձի գծով ծախսեր	(81,919)	(65,685)
Մաշվածություն և ամորտիզացիա	(39,371)	(37,597)
Ծրագրի սպասարկման ծախսեր	(22,937)	(22,314)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(3,260)	(4,680)
Այլ գործառնական ծախսեր*	(41,832)	(34,480)
Ընդամենը գործառնական ծախսեր	(189,319)	(164,756)
Գործառնական գործունեությունից վնաս	(97,876)	(89,213)
Ֆինանսական եկամուտ*	6,100	6,556
Ֆինանսական ծախսեր	(27,351)	(12,662)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ օգուտ/(վնաս)	3,785	(8,678)
Վնաս մինչև շահութահարկ	(115,342)	(103,997)
Շահութահարկի գծով փոխհատուցում	15,449	15,119
Հաշվետու տարվա վնաս	(99,893)	(88,878)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	(99,893)	(88,878)

* Ընկերության համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվության որոշ հոդվածները չեն համապատասխանում 2015թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար հրապարակված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հոդվածներին, քանի որ Ընկերությունը կատարել է վերադասակարգումներ, որպեսզի ապահովի տարբեր ժամանակահատվածների հաշվետվությունների համադրելիությունը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել և հավանության են արժանացել տպագրության Տնօրենների Խորհրդի կողմից:

Գործադիր տնօրեն՝



Կիմ Ավանեսյան

Գլխավոր հաշվապահ՝



Սուսաննա Զարգարյան

9 հունիսի, 2017թ.

«ՄոբիԴրամ» ՓԲԸ**Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազ.դրամ	2016թ.	2015թ.
Ակտիվներ		
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	2,630	2,241
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	45,811	31,958
Ընթացիկ հարկային ակտիվներ	308	308
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	315,463	343,007
	<u>364,212</u>	<u>377,514</u>
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	19,040	33,482
Ոչ նյութական ակտիվներ	202,530	166,375
Հետաձգված հարկային ակտիվներ	72,844	57,395
	<u>294,414</u>	<u>257,252</u>
	<u>658,626</u>	<u>634,766</u>
Ընդամենը ակտիվներ		
Կապիտալ և պարտավորություններ		
Կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	713,000	613,000
Լրացուցիչ կապիտալ	49,534	49,534
Կուտակված վնաս	(479,347)	(379,454)
	<u>283,187</u>	<u>283,080</u>
Ընդամենը կապիտալ		
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	97,228	101,087
	<u>97,228</u>	<u>101,087</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Փոխառություններ	278,211	250,599
	<u>278,211</u>	<u>250,599</u>
	<u>375,439</u>	<u>351,686</u>
Ընդամենը պարտավորություններ		
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	<u>658,626</u>	<u>634,766</u>

«ՄոբիԴրամ» ՓԲԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

2016թ. -ի դեկտեմբերի 31 -ին ավարտվող տարվա համար

Հազ. դրամ	2016թ.	2015թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաշվետու տարվա վնաս	(115,342)	(103,997)
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	39,371	37,597
Ֆինանսական եկամուտ	(6,100)	(6,556)
Ֆինանսական ծախսեր	27,351	12,662
Փոխարժեքային տարբերությունից զուտ (օգուտ)/վնաս	(3,785)	8,678
Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունը	(58,505)	(51,616)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի ավելացում	(12,552)	(25,509)
Պաշարների (ավելացում)/նվազում	(389)	62
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի (նվազում)/ավելացում	(3,898)	47,203
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	(75,344)	(29,860)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(489)	(712)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(60,595)	(10,999)
Ստացված տոկոսային եկամուտ	5,036	5,834
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	(56,048)	(5,877)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Բաժնետիրական կապիտալի համալրում	100,000	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից	100,000	–
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	(31,392)	(35,737)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	3,848	(5,051)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	343,007	383,795
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	315,463	343,007

«ՄոբիԴրամ» ՓԲԸ

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազ.դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը կապիտալ
2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	613,000	49,534	(290,576)	371,958
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	–	–	(88,878)	(88,878)
2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	613,000	49,534	(379,454)	283,080
2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	613,000	49,534	(379,454)	283,080
Բաժնետիրական կապիտալի համալրում	100,000	–	–	100,000
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	–	–	(99,893)	(99,893)
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	713,000	49,534	(479,347)	283,187

Ծանոթագրություն 1

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերությունը պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք բաղկացած են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունից, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունից, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունից և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունից, քաղված են Ընկերության՝ 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած և 2017թ. հունիսի 9-ին ստորագրված ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկությունները, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից՝ ըստ պահանջի: